Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սոֆիկ Աբխաթովի Մաթևոսյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոցի թիվ 34/3 հասցեում գտնվող 80.8քմ /80.8քմ արտաքին և 55.2քմ ներքին/ մակերեսով խանութի և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00263հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Սոֆիկ Աբխաթովի Մաթևոսյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 433

10 Մայիս 2021թ.

ք. Էջմիածին

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 07.05.2021թ. ԹԻՎ 429 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին համայնքի ղեկավարի 07.05.2021թ. «Հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 429 որոշման մեջ կատարելի հետևյալ փոփոխությունները.

առաջին մասի առաջին պարբերությունում նշված «13042020-04-0051 տրված 13.04.2020թ.» բառերի փոխարեն կարդալ «13052020-04-0051 տրված 13.05.2020թ.» բառերը և նույն մասում նշված <<Կնունյանց>> բառերի փոխարեն կարդալ «Սոս Մանուկյան» բառերը:

առաջին կետում նշված « Կնունյանց» բառերի փոխարեն կարդալ «Սոս Մանուկյան» բառերը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 434

10 Դեկտեմբեր 2021թ.

ք. Էջմիածին

ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ
ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի Ջվարթնոց թաղամասի թիվ 5ա շենքի թիվ 18 բնակարանի բնակիչ՝ Հրաչիկ Մնացականի Սահակյանը դիմել է Էջմիածնի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 025128, տրված 25.09.1998թ./ Էջմիածին քաղաքի <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագրեր՝ 04-002-0229- և 04-002-0230-/ 0.74հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի փոխադրելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 12.11.2009թ. կարգադրությամբ ստեղծված բարձրարժեք հողատեսքերը ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրող հանձնաժողովի դրական եզրակացությունը.


ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Էջմիածին քաղաքի <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագրեր՝ 04-002-0229- և 04-002-0230-/ 0.74հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ք. Էջմիածին

ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆԿՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ
ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱԿԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- ## Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 436

12.05.2021թ.

ք. Էջմիածին

ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՊԱՐԱՊԵՏ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 71/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԱՐԻՍՊԵՐ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն, համայնքի ղեկավարի 29.03.2021թ. թիվ 269 որոշումների, առաջարկել է կառույցն իրականացնող անձին՝ Զավեն Պողոսի Խաչատրյանին գնման նախապայտվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 71/2 հասցեում գտնվող 2.2քմ /2.2քմ արտաքին և 2.2քմ ներքին/ մակերեսով պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00582հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

Կառույցն իրականացնող անձը տվել է իր գրավոր համաձայնությունը՝ գնելու այն, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գների՝ 2.2քմ /2.2քմ արտաքին և 2.2քմ ներքին/ մակերեսով պարսպի համար 4332 /չորս հազար երեք հարյուր երեսուներկու/ ՀՀ դրամ և 0.00582հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով՝ 258513 /երկու հարյուր հիստուոր հազար հինգ հարյուր տասներեք/ ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Զավեն Պողոսի Խաչատրյանին գնման նախապայտվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 71/2 հասցեում գտնվող 2.2քմ /2.2քմ արտաքին և 2.2քմ ներքին/ մակերեսով պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00582հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

2. Զավեն Պողոսի Խաչատրյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 437

«12» մայիսի 2021թ.

ք. Էջմիածին

ՄԱՅԻՍԻ 8-Ի ԵՐԿՐԱՊԱՀԻ ՕՐԿԱ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Մայիսի 8-ի՝ Երկրապահի օրվա կապակցությամբ երկրապահի անդամները այցելել են եռաբլուր: Այդ նպատակով ձեռք բերված ավտոբուսի ծառայության համար.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Էջմիածին քաղաքի 2021թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 10.0 հազ. դրամ փոխանցել «Էջմիածնի բեռնաուղևորատար ավտոտրանսպորտային» ԲԲԸ-ի համապատասխան հաշվեհամարին՝ ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ԳԱՄԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 438

12 Դեկտեմբեր 2021թ.

ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Էջմիածին քաղաքի, Մանուշյան փողոցի թիվ 29 տան բնակիչ Տիգրան Մարտիկի Բարեղամյանի դիմումը իրեն պատկանող բնակելի տունը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 29032021-04-0042, տրված 29.03.2021թ./, «Ավագ Ավագյան Գագիկի» ԱՁ /վկայական թիվ 0331/ կողմից 07.04.2021թ. կատարված չափագրությունը/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի, Մանուշյան փողոցի թիվ 29 հասցեում գտնվող տան զբաղեցրած հողամասի 0.088 հա մակերեսով մասին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Մանուշյան փողոց թիվ 29 բնակելի տուն, 0.062 հա մակերեսով մասին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Մանուշյան փողոց թիվ 29/2 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝



Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 439

12 *Մայիս* 2021թ.

ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱԿՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով և քննարկելով Էջմիածին քաղաքի, Պռոշյան փողոցի թիվ 2 տան բնակիչ Արթուր Երվանդի Ղարիբյանի դիմումը իրեն և Գայանե Աշոտի Ղարիբյանին պատկանող հողամասերին ընդհանուր հասցե տրամադրելու մասին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, 04-002-0480-0054 և 04-002-0480-0073 ծածկագրերով անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N 29102019-04-0039 տրված 29.10.2019թ. և N 03052021-04-0038 տրված 03.05.2021թ./ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ ք. Էջմիածին, Սուրբ Մ.Մաշտոցի փողոց թիվ 138ա/96, 142/1 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 440

«12» մայիսի 2021թ.

ք. Էջմիածին

ԷԶՄԻԱԾՆԱ ՔԱՂԱՔԻ ԹՎՈՎ 19 ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածնի համայնքապետարան են դիմել թվով 19 քաղաքացիներ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքացիները գտնվում են սոցիալապես ծանր պայմաններում և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48 հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով 22.03.2019 թ. ավագանու թիվ 4 նիստի թիվ 38 որոշման հավելվածի 5-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Էջմիածին համայնքի 2021թ. բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից Էջմիածին քաղաքի թվով 19 քաղաքացիների հատկացնել 965 000 դրամ դրամական օգնություն համաձայն կից ցուցակի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 441

19 Դեկտեմբեր 2021թ.

ք. Էջմիածին

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 25.01.2021թ. ԹԻՎ 66 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 17.03.2021թ. ԹԻՎ 230 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին համայնքի ղեկավարի 25.01.2021թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանած բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները Մարինե Ռաֆիկի Գևորգյանի սեփականությունը համարելու մասին» թիվ 66 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

առաջին մասի առաջին պարբերությունում նշված «0. 0382հա մակերեսով» բառերի փոխարեն կարդալ «0. 036հա մակերեսով» բառերը :

առաջին կետում նշված «0. 0382հա մակերեսով» բառերի փոխարեն կարդալ «0. 036հա մակերեսով» բառերը:

2. Ուժը կորցրած ճանաչել Էջմիածնի համայնքի ղեկավարի 17.03.2021թ. թիվ 230 որոշումը:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 448

12.12.2021թ.

ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով և քննարկելով Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 10 շենքի թիվ 4 բնակարանի բնակիչ Ոսկեհատ Մեսրոպի Հայրապետյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Ոսկեհատ Մեսրոպի Հայրապետյանին պատկանող անշարժ գույքին /հիմք՝ վկայական 1464075, տրված 23.06.2005թ./ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Բաղրամյան փողոց թիվ 10/15 կրպակ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ղ. ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 443

12.01.2021թ.

Բ. Էջմիածին

ԲՆԱԿԱՐԱՆԻ ՂԱՍԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 71 շենքի թիվ 2 բնակարանի բնակիչ Արմենուհի Խաչիկի Բաղդասյանը դիմել է Էջմիածնի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 18012016-04-0003 տրված 18.01.2016թ. և «Աստղիկ Մանուկյան» ԱԶ-ի/ որակավորման վկայական թիվ 096/ կողմից 22.07.2020թ. կատարված չափագրությանը /, Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 71 շենքի թիվ 2 բնակարանի ինքնակամ բացված դուռը օրինականացնելու, նպատակային նշանակությունը՝ հասարակական, իսկ գործառնական նշանակությունը վարսավիրանոցի փոփոխելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 71 շենքի թիվ 2 բնակարանի ինքնակամ բացված դուռը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ բացված դուռն օրինականացման համար սահմանված 2316 /երկու հազար երեք հարյուր տասնվեց/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
3. Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 71 շենքի թիվ 2 հասցեում գտնվող բնակարանի նպատակային նշանակությունը բնակելիից փոփոխել հասարակական նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ վարսավիրանոցի, որը հնարավոր է առանց նախագծային փոփոխությունների:
4. Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 71 շենքի թիվ 2 բնակարանը ոչ բնակելի տարածքի փոփոխելու կապակցությամբ հանել բնակարանային ֆոնդից:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԷԶՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 444

«12» մայիսի 2021թ.

ք. Էջմիածին

«ԱՐԻԱ» ՎՈԿԱԼ ՍՏՈՒԴԻԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածնի համայնքապետարան է դիմել «Արիա» վոկալ ստուդիայի տնօրեն Անահիտ Կոչկարյանը՝ Բելոռուսի Մագիլով շրջանի Կլիմովիչ քաղաքում ս. թ. մայիսի 28-31-ը «Ոսկե մեղու» մշակութային մրցույթ-փառատոնի երկրորդ փուլին թվով 12 սաների մասնակցելու համար ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Արիա» վոկալ ստուդիայի սաները անցել են «Ոսկե մեղու» մշակութային մրցույթ-փառատոնի երկրորդ փուլ և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48 հոդվածի պահանջերով և հիմք ընդունելով 22.03.2019 թ. ավագանու թիվ 4 նիստի թիվ 38 որոշման հավելվածի 5-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Էջմիածին համայնքի 2021թ. բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից հատկացնել 500.0 հազ. դրամ: Գումարը փոխանցել Անահիտ Կոչկարյանի «Հայէկոնոմ բանկ» ՓԲԸ-ի 163006218909 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ԳԱՄՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 445

12.12.2021թ.

ք.Էջմիածին

ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով և քննարկելով Էջմիածին քաղաքի, Սբ.Մ.Խորենացու փողոցի թիվ 1/1 շենքի թիվ 14 բնակարանի բնակիչ Գագիկ Ալբերտի Մարգարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Գագիկ Ալբերտի Մարգարյանին պատկանող բնակարանին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 09102020-04-0024, տրված 09.10.2020թ./ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սբ.Մ.Խորենացու փողոց թիվ 1/1 շենք թիվ 14 բնակարան:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ. ԳԱՄԱՂՈՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 446

12 Դեկտեմբեր 2021թ.

ք. Էջմիածին

ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի Մայիսյան փողոցի թիվ 53 տան բնակիչ՝ Ռուզաննա Թորգոմի Հայրապետյանը դիմել է Էջմիածնի համայնքապետարան <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր 04-002-0397-0035/ 0.4385հա գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ պտղատու այգին ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի փոխադրելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 12.11.2009թ. թիվ 151 կարգադրությամբ ստեղծված բարձրարժեք հողատեսքերը ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրող հանձնաժողովի դրական եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Էջմիածին համայնքի <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր 04-002-0397-0035/ 0.4385հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ պտղատու այգին փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 444

12 Դեկտեմբեր 2021թ.

ք. Էջմիածին

ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի Արագածի զանգվածի թիվ 1 շենքի թիվ 52 բնակարանի բնակիչ՝ Շավարշ Պողոսի Ղարիբյանը դիմել է Էջմիածնի համայնքապետարան իրեն, Լենա Անուշավանի Բավեյանին, Արմեն Շավարշի Ղարիբյանին և Գայանե Շավարշի Ղարիբյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման վկայական թիվ 2000149, տրված 10.04.2006թ./ Էջմիածին քաղաքի <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0384-0002/ 0.45հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի փոխադրելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 12.11.2009թ. կարգադրությամբ ստեղծված բարձրարժեք հողատեսքերը ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրող հանձնաժողովի դրական եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Էջմիածին քաղաքի <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0384-0002/ 0.45հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

14 *Signature*

2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 448

ք. Էջմիածին

ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՂԱՐԶԱԿԱՆ ԳԿՏ-ՈՒՄ ՄԻՔԱՅԵԼ ԱՐԳԱՐԻ ՄԻՄՈՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՏԱՐԱՐՈՒՄԻ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 33/21 վարչական գործը՝ Էջմիածին քաղաքի Վաղարշապատ ԳԿՏ-ում Միքայել Արգարի Միմոնյանի կողմից առանց համապատասխան թույլտվության շինարարական աշխատանքներ կատարելու մասին, պարզեց, որ

Միքայել Արգարի Միմոնյանը (գրանցման հասցե՝ քաղաք Էջմիածին, Զվարթնոց թաղ., թիվ 8-րդ շենք, թիվ 31 բնակարան, անձնագիր՝ AU0405379), Անժելա Արգարի Միմոնյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքում, Էջմիածին քաղաքի Վաղարշապատ ԳԿՏ-ում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, իրականացրել է շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Էջմիածին համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից 26.04.2021 թվականին կազմված թիվ 11 արձանագրության, տեղագնության ակտի, տարածքի լուսանկարների հիման վրա 2021 թվականի ապրիլի 26-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ և 31-րդ հոդվածների հիմքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Էջմիածին համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է լսում, պատշաճ լսման վայրի և անցկացման ժամի մասին ծանուցված Միքայել Արգարի Միմոնյանի և Անժելա Արգարի Միմոնյանի բացակայությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

- Էջմիածին համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից Էջմիածին քաղաքի Վաղարշապատ ԳԿՏ-ում առանց համապատասխան թույլտվության Միքայել Արգարի Միմոնյանի կողմից կատարված ինքնակամ շինության կապակցությամբ 26.04.2021 թվականին կազմված թիվ 11 արձանագրությունը, տեղագնության ակտը:

- Տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:

- Էջմիածին համայնքի ղեկավարի 26.04.2021 թվականի «Էջմիածին քաղաքի վաղարշապատ ԳԿՏ հասցեում ինքնակամ շինարարությունը կասեցնելու մասին» թիվ 381 որոշումը:

- Հանձնաժողովի 12.05.2021թ. թիվ 33/21 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը՝ հաստատված է համարվում հետևյալը.

Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղ., թիվ 8-րդ շենք, թիվ 31 բնակարանի բնակիչ Միքայել Արգարի Միմոնյանի կողմից Էջմիածին քաղաքի Վաղարշապատ ԳԿՏ-ում գտնվող, Անժելա Արգարի Միմոնյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքում իրականացվել է ինքնակամ շինության կառուցման շինարարական աշխատանքներ /բակի տեղադրում, պարսպի կառուցում, շինարարական աշխատանքների իրականացում/, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, ուստի կարող ենք հաստատված համարել, որ քննարկվող շինությունը հանդիսանում է ինքնակամ կառույց:

Վերը նշված իրավախախտումը կասեցնելու նպատակով Էջմիածին համայնքի ղեկավարը ընդունել է 26.04.2021 թվականի «Էջմիածին քաղաքի վաղարշապատ ԳԿՏ հասցեում ինքնակամ շինարարությունը կասեցնելու մասին» թիվ

381 որոշումը, որի մեկական օրինակ առձեռն հանձնվել է Միքայել Աբգարի Սիմոնյանին և Անժելա Աբգարի Սիմոնյանին:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2021 թվականի ապրիլի 26-ին Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021 մայիսի 12-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով առձեռն ծանուցվել են՝ որպես ինքնակամ շինարարություն իրականացնող անձ՝ Միքայել Աբգարի Սիմոնյանը և որպես տարածքի սեփականատեր՝ Անժելա Աբգարի Սիմոնյանը:

Վերջիններս չնայած <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի՝ պատշաճ ծանուցված եղել են վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, սակայն չեն ներկայացել վարչական վարույթի լսմանը, չեն ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

Այսպիսով գտնում են, որ ապացուցված կարելի է համարել այն փաստը, որ Համլետ Մարգարի Ասատրյանի կողմից կատարվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված իրավախախտում և վերջինս սույն դեպքում հանդիսանում է իրավախախտման սուբյեկտ: Հողի սեփականատեր Անժելա Աբգարի Սիմոնյանը 26.04.2021 թվականին կազմված թիվ 11 արձանագրության մեջ հայտնել է, որ Միքայել Աբգարի Սիմոնյանը շինարարական աշխատանքները իրականացրել է իր թույլտվությամբ, իսկ Միքայել Աբգարի Սիմոնյանը իրեն ընդունել է որպես իրավախախտում կատարած/ինքնակամ շինությունը կատարած/ անձ՝ սուբյեկտ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքեր, շինություններ կամ այլ կառույցներ:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 32-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, վարչական իրավախախտումների մասին օրենսդրության հիմունքներին, նույն օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ, 6-րդ և 23-րդ հոդվածները սահմանում են քաղաքաշինության գործունեության սուբյեկտներին շրջանակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները, շինարարության թույլտվության հասկացությունը, այն տվող անձանց շրջանակները:

Սույն գործով պարզ է դառնում, որ քաղաքաշինության գործունեության սուբյեկտը՝ Միքայել Աբգարի Սիմոնյանն է: Վերջինս կրում է ֆիզիկական անձի այն հատկանիշները, որը կարող է հանդես գալ որպես քաղաքաշինական գործունեության մասնակից, այսինքն անշարժ գույքը փոփոխելու իրավասուբյեկտությամբ օժտված օգտագործող (կառուցապատող, շինարարություն իրականացնող):

Տվյալ պարագայում Միքայել Աբգարի Միմոնյանը իրեն տրամադրված էջմիածին քաղաքի Վաղարշապատ ԳԿՏ-ում գտնվող տարածքում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի /շինարարության թույլտվության/ իրականացրել է ապօրինի ինքնակամ կառույցի շինարարություն:

Ուստի վարչական վարույթով ապացուցված է համարվում այն փաստը, որ Միքայել Աբգարի Միմոնյանը, որպես կառուցապատող էջմիածին համայնքի վարչական սահմաններում գտնվող սեփականության իրավունքով այլ անձին պատկանող Վաղարշապատ ԳԿՏ-ում գտնվող տարածքում, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան հողօգտագործման իրավունքի, իրականացրել է ապօրինի շինության կառուցման շինարարական աշխատանքներ և հանդիսանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածով սահմանված իրավախախտման սուբյեկտ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասին 1-ին կետի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի ա) կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Միքայել Աբգարի Միմոնյանի նկատմամբ նշանակել տուգանք 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով՝ էջմիածին քաղաքի Վաղարշապատ ԳԿՏ-ում ինքնակամ շինություն կառուցելու համար:

2. Նախազգուշացնել Միքայել Աբգարի Միմոնյանին, որ եթե համայնքի ղեկավարի որոշմամբ տուգանք նշանակելուց հետո շարունակվեն շինարարական աշխատանքները, ապա համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ կետի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հազար հինգ հարյուրապատիկի չափով՝ 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարով:

3. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել էջմիածին համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում՝ հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ



Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 487

«24» մայիսի 2021թ.

ք. Էջմիածին

ԷԶՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով անհրաժեշտությունից և ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով.


ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հողի հարկի 2-րդ եռամսյանը ավելացնել 3347.2 հազ. դրամ:
2. Մանկապարտեզ ՀՈԱԿ-ների /բաժին 09, խումբ 1, դաս 1/ <Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին> հոդվածի /հոդ. 4511/ 2-րդ եռամսյանը նվազեցնել 18052.8 հազ. դրամ և ավելացնել 4-րդ եռամսյակին:
3. Քաղաքապետարանի /բաժին 01, խումբ 1, դաս 1/ <Հատուկ նպատակային այլ նյութեր> հոդվածի /հոդ. 4269/ 4-րդ եռամսյանը նվազեցնել 500.0 հազ. դրամ և ավելացնել 2-րդ եռամսյակին:
4. Ճանապարհային տրանսպորտի /բաժին 04, խումբ 5, դաս 1/ <Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում> հոդվածի /հոդ. 4251/ 3-րդ եռամսյանը նվազեցնել 20000.0 հազ. դրամ և ավելացնել 2-րդ եռամսյակին:
5. Աղբահանման /բաժին 05, խումբ 1, դաս 1/ <Հատուկ նպատակային այլ նյութեր> հոդվածի /հոդ. 4269/ 4-րդ եռամսյանը նվազեցնել 400.0 հազ. դրամ և ավելացնել 2-րդ եռամսյակին:
6. Բնակ. Կոմունալ վարչության /բաժին 06, խումբ 6, դաս 1/ <Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ> հոդվածի /հոդ. 4239/ 4-րդ եռամսյանը նվազեցնել 500.0 հազ. դրամ և ավելացնել 2-րդ եռամսյակին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ





ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒԹՅԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ բաղադրացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով և հիմք ընդունելով «Գ.Առաքելյան» ԱՀ-ի /որակավորման վկայական թիվ 050/ կողմից 12.11.2020թ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Իսի-Լե-Մուլիկոն փողոցի վրա գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0135հա մակերեսով հողամասի վրա, ինքնակամ կառուցված 52.5քմ /52.5քմ արտաքին և 37.3քմ ներքին/ մակերեսով եկեղեցապատկան վարժարանը համարել Էջմիածին համայնքի սեփականություն: Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նրա զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժինեռատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:
2. Շինության պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0135հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված՝ հատուկ պահպանվող նպատակային նշանակության, պատմական և մշակութային գործառնական նշանակության:
3. Օրինականացնել Էջմիածին քաղաքի Իսի-Լե-Մուլիկոն փողոցի վրա գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0135հա մակերեսով հատուկ պահպանվող նպատակային նշանակության, պատմական և մշակութային գործառնական նշանակության հողամասի վրա, ինքնակամ կառուցված 52.5քմ /52.5քմ արտաքին և 37.3քմ ներքին/ մակերեսով վարժարանը:
4. Վարժարանին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Իսի-Լե-Մուլիկոն փողոց թիվ 16/5:
5. Էջմիածին քաղաքի Իսի-Լե-Մուլիկոն փողոց թիվ 16/5 հասցեում գտնվող 52.5քմ /52.5քմ արտաքին և 37.3քմ ներքին/ մակերեսով վարժարանը կառուցվել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու /Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին/ կողմից:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 493

Լ.Տ. Տաթևյան 2021թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով <<ԼՈՒՊՈՒՍ>> ՍՊԸ տնօրեն Սևակ Գագիկի Բիշարյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ վկայական 2794078, տրված 03.09.2010թ. և «Կարեն Մաչանյան» ԱԶ /վկայական թիվ 0244/ կողմից 17.05.2021թ. կատարված չափագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Մարգարայի խճուղու թիվ 1/1 հասցեում գտնվող գույքի զբաղեցրած հողամասի 0.2603 հա մակերեսով մասին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Էջմիածին-Մարգարա խճուղի թիվ 1/1 շինություններ, 0.0374 հա մակերեսով մասին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Էջմիածին-Մարգարա խճուղի թիվ 1/8 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 494

25 հուլիսի 2021թ.

ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱԿՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

